ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱՄ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Թորոսյան,

Ի պատասխան Ձեր 08.04.2026թ. գրության՝ «Ոսկու շուկա»-ին հարակից և «Անգլիական այգու» մուտքի անմիջապես հարևանությամբ գտնվող հողատարածքի վերաբերյալ, տեղեկացվում է, որ Կենտրոն վարչական շրջանի Մ.Խորենացու փողոցի և 1-ին փակուղի մոտ գտնվող հողամասում քաղաքաշինական ծրագրի իրականացման նպատակով նախագծման թույլտվության տրամադրման հարցը քննարկվել է Երևանի քաղաքապետի 06.02.2024թ. N439-Ա որոշմամբ ձևավորված աշխատանքային խմբի 18.09.2024թ. նիստի օրակարգում և համարվել ընդունելի:

Միաժամանակ տեղեկացվում է, որ մինչ օրս կառուցապատող «Բյուրակն» ՍՊ ընկերության կողմից նշված հասցեում քաղաքաշինական ծրագրի իրականացման նպատակով նախագծման թույլտվության տրամադրման հայտ չի ներկայացվել:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ